

կոյտ ամբոխին բնակաց իւրոյ տէրու-
թեանն»:

«Եւ զինի այսորիկ, որ է երկրորդ հար-
ուածք այլազգեացն՝ դարձեալ հրաման
ետ ելանել ի պատերազմ, եւ հետամուտ
հասեալ առ նոսա. եւ ահա իրրեւ արք Ռ
(1000) ի յընտրելոցն Աղուանից պատահ-
եալ նոցա հարին զնոսա եւ ածին փախըս-
տեայ ի բանակն եւ ինքեանք դարձան ողջ-
անդամ, եւ ոչ մի ոք վիրաւորուեցաւ. եւ
հասեալ առ զօրավարն իւրեանց մեծաւ
յաղթութեամբ եւ բազում աւարաւ»:

«Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր
կործանմանն, ի տարակուսանս ըմբռեալ
փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր,
հնարէր ելս իրացն դտանել ի վրանայարկն
փակեալ, եւ ոչ առնոյր դուլ եւ դադար:
Եւ հատաւ քուն յաչաց նորա, եւ ոչ ոք
մտանէր եւ ելանէր առ նա զաւուրս Ժ
(10), զի եմուտ ի սենեակ ամօթալի երե-
սօք. այլ եւ երկիւղ ոչ սակաւ ունէր զնա,
զի բազում գունդք սուսերամերկաց շուր-
ջանակի պահէին զնա» (էջ 293-5):

Սալիֆայէն նոր հրաման կու դայ Բու-
ղային՝ անպատճառ նուաճել Ապուսու-
սէն: Բուղա «Յայնժամ հրաման ետուն
ամենայն զօրացն ելանել ի պատերազմ.
եւ ահա ազազակ եւ փողք եւ քնարք եւ
ջնարք, եւ վառեալ զինու եւ սրոյ եւ ամե-
նայն պատրաստութեամբ անհուն զօրա-
ցըն, մինչ զրեթէ ի հիմանց զլեռոնն տա-
պալել, եւ եհան զգորսն մինչ ի զլուխ լե-
րինն, եւ ընդ նոսա նշանս բազումս, իրրեւ
Ռ (1000) ընտրելաց քաջ երիվարօք. եւ զը-
րեթէ ոչ ամենեւին ուրեք երեւեցաւ այն-
պիսի ահաւոր տեսիլ զօրու եւ սպառազէն
կազմութեան՝ ամենայն թաղաւորաց, որ
կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ
սաստիկ եւ ահազին որոտումնն եւ ճայ-
թումնն եւ փայլուն զինուցն, եւ որ ինչ
յայնժամ զարդարեալ եւ զինեալ պատ-
րաստեցան զօրքն Տաճկաց (Արարացւոց):
Եւ ելանէին զունդք զունդք շտապով եւ
ձեպով մի զմիոյ կնի, եւ ամենայն ոք որ
տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքա-

զրեալ լինէր: Եւ նստէր անդ ի բացեայ ի
վերայ բլրի միոջ տէր Մուշեղ որդի սպա-
րապետին եւ կայր հիացեալ ահեղ եւ մեծ
զարմացմամբ» (էջ 296-7):

Ուրեմն Ապուսուսէ ունէր որդի մը եւ
ան կը կոչուէր տէր Մուշեղ: Արժրունի
կ'աւելցնէ որ Մուշեղ «էր վարժեալ Աստ-
ուածաշունչ գրոց եւ ընդել եւ ծանօթ էր
նարտասանական հրահանգիցն՝ եղ առ
յայն ժամու խմացական տեսութիւնն գեր-
գրս՝ որոյ սկիզբն է՝ Անգրազեալ ական
սրտի նայեցող անձն իմ ի միւս անգամ
գալուստն, Ե (5) սուրն ի յութերորդ
վանգէ» (էջ 297-8):

Բուղա ահարկու պատրաստութեամբ կը
յարձակի Ապուսուսէի վրայ: «Եւ եղև
իրրեւ դումարեցան ի մի վայր ամենայն
բազմութիւն զօրացն աւելի քան զՄՌ (200
հազար)աց, եւ կազմեցին ռազմ եւ կար-
գեցին ճակատ, եւ ետուն ճայն այր առն
ախոյսան ելանել. եւ ահա Ապուսուսէ,
որ ճանաչէր երկցու որդի՝ հանդէպ նոցա
ել ի պատերազմ եւ հանդիսացաւ ընդդէմ
նոցա. եւ եղև իրրեւ զըլուր մի մեծ եր-
կաթի, կամ գլխմ աղամանդեայ. եւ խու-
որն բոլորեալ գունդ կային մածեալ իր-
րեւ զմի այր: Եւ զօրքն Տաճկաց (Արարա-
ցւոց) պնդեցան եւ փակեցին շուրջանակի
ի ներքս զգունդն Աղուանից եւ զիմեցին
յանդուզն ի վերայ նոցա. եւ նոքա կային
անշարժ, եւ ոչ էլ այր քան զընկեր յառաջ.
եւ մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նո-
ցա մատնեցան՝ եւ նոքա կային յազօթս
եւ զԱստուած կարդային օգնել նոցա, եւ
զիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ
նմանութեան տեսոնանման խաչին, եւ
բախեցին զճակատն եւ պատուեցին զոսովն
եւ զարձուցին ընդ զառ ի վայրն եւ ի ըն-
ցին ի լեռնէ անտի, եւ հարին ի հարուածս
մեծամեծս որպէս յարդ ի հոլմոյ վարեալ,
կամ ծուխ վատնեալ ի մըրկէ՝ այնպէս
կորեան գնացին յերեսաց զօրացն Աղու-
անից: Եւ զարձան կուտեցին աւար, որոց
ոչ գոյր թիւ» (էջ 298-9):

Ապուսուսէ զարձեալ յաղթական կ'ըլ-